

# **ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

**2023-2028թթ.**



**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԱՂԱՎՆԱՉՈՐԻ Զ. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ**

**ՄԻՋԱԿԱՐԳ ԴՊԸՀՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՈՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝**

**ՄԱՐԻԱՄ ՄԵՐՈԺԻ ՔՈՉԱՐՅԱՆ**

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

|   |          |
|---|----------|
| <b>Ներածություն</b>   | <b>4</b> |
| <b>Զարգացման ծրագրի բովանդակությունը</b>  | <b>6</b> |
| 1. Ուսումնական հաստատության գործունեությունը  | 9        |
| 1.1 Կրթական կարիքների նկարագրությունը   | 11       |
| 1.2 Դպրոցի գործունեության համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին  | 13       |
| 1.3 Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին   | 16       |
| Դպրոցի առաքելությունը   | 22       |
| 2.Իրավիճակի վերլուծությունը. Ուժեղ և քույլ կողմերը  |          |
| 2.1 Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծությունը  | 24       |
| 2.2 Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծությունը  | 29       |
| 2.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը  | 40       |
| 2.4 Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնտղական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ | 46       |
| 2.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացում   | 50       |
| <b>Աշակերտական համակազմ</b>   |          |

|  |     |
|--|-----|
| 2.6 Օգտագործվող S&S և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը-----  | 59  |
| 2.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը-----   | 61  |
| 2.8 Բազմակարծիք , ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն-----  | 69  |
| 2.9 Աշխատակազմի արժենորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը-----   | 74  |
| 2.10 Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և<br>պլանավորման խնդիրների տեսանկյունից-----  | 77  |
| 3. Նպատակների և խնդիրների սահմանումը՝ ըստ համապատասխան ոլորտների -----   | 82  |
| 4. Ուսումնական հաստատության գործունեության սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող<br>գործողություններն ու միջոցառումները, համապատասխան ժամանակացույցերը և պատասխանատունները, զարգացման ծրագրի<br>իրականացման ռիսկերը. ռիսկերը մեղմացնող կամ չեղոքացնող գործողությունները, անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական<br>պարագաները ,վերահսկողները՝ ըստ համապատասխան ոլորտների----- | 92  |
| 5. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները-----  | 145 |
| 6.Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները, ամենամայ<br>հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները-----  | 154 |
| Եզրակացություն-----  | 176 |
| Հավելված-----  | 177 |

## **Ներածություն**

**«Դպրոցի նպատակը զիտություն տալուց ավելի՝ զիտությունները ձեռք բերելու արվեստը սովորեցնելն է»**

**L. Շանթ**

Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթ է, որի հիման վրա պլանավորվում է աշխատանքը դպրոցում՝ ապահովելով դպրոցի 5 տարվա զարգացման տեսլականը: Ժամանակակից աշխարհում գրեթե բոլոր ոլորտներում փոփոխություններն աննախադեպ արագ ու դինամիկ են ընթանում: Նման փոփոխությունների առանձնահատկություններից մեկն այն է, որ գիտության ու տեխնիկայի ընձեռած նոր հնարավորությունները արագորեն ներթափանցում են հասարակական հարաբերությունների, կյանքի կազմակերպման, աշխատանքի, գիտելիքների ձևավորման ու փոխանցման ոլորտ: Շարունակաբար նորացվող, զարգացող ու փոփոխվող գիտելիքները և դրա ստեղծման համար անհրաժեշտ նորարարությունն ու ստեղծագործականությունը դառնում են մրցունակության և արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոններ՝ թե՛ անհատական, թե՛ ներպետական և թե՛ համաշխարհային մակարդակներում:

Չնավորվում է մարդու նոր որակ, մարդ, ով պետք է կարողանա այս ազատության մեջ գտնել իրեն, դիմագրավել ժամանակի մարտահրավերներին, մարդ, ով պետք է պատրաստ լինի ապրել ու գործել այն չափորոշիչներով, որոնք թելադրում են աշխարհի այսօրվա զարգացումները:

Այս՝ այսօր ականատես ենք մարդկային կյանքի ամենանշանակալի իրադարձություններից մեկի՝ նոր հասարակության ձևավորմանը: Եվ այսօր խոսել կրթության մասին, նախնառաջ, նշանակում է խոսել այն մասին, թե ինչպիսի քաղաքացի ու անհատ ենք ուզում ձևավորել կամ համարժեք հարցադրումը՝ ի՞նչ ենք այսօր հասկանում կրթություն ասելով:

Եթե նախորդ համակարգում կրթության վեկտորը գլխավորապես ուղղված էր դեպի կրթության բովանդակության ակադեմիական գիտելիքների բաղադրիչը, ապա այժմ ժողովրդավարության զարգացման ճանապարհը բռնած երկրների համար սովորողների գիտելիքները անհրաժեշտ են, բայց դեռ բավարար չեն, և կամա թե ակամա իրական կյանքի ու դպրոցի միասնությունը դառնում է կրթության գլխավոր հիմնախնդիր: Եվ պատահական չէր, որ մեր հանրապետությունում կրթական բարեփոխումների հիմնական շեշտը դրվեց հենց կրթության բովանդակության մյուս բաղադրիչների՝ կարողություններ, հմտություններ, արժեքային համակարգ, դիրքորոշում և վերաբերմունք բաղադրիչների վրա, որը կոչվում է կարողունակություն՝ կոմպետենցիա:

Եվ ավանդական ուսուցչակենտրոն ուսուցումից անցում կատարվեց աշակերտակենտրոն ուսուցման, հետևաբար, մանկավարժության ավանդական, դասական մեթոդները իրենց տեղը հետզհետե զիջեցին համագործակցային ու խմբային եղանակներով ուսուցման համապատասխան մեթոդներին ու հնարքներին: Դպրոցի առջև, որպես սոցիալական կյանքի մի օղակի, նույնպես բացվեցին «աշխարհի դրույթն ու պատուհանները» և քայլ առ քայլ դպրոցում ձևավորվեց ազատ մթնոլորտ՝ ավելի ու ավելի մեծ հնարավորություններ ու պայմաններ ստեղծելով ուսուցիչ-աշակերտ փոխամագործակցության համար:

## ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կրթությունը ժողովրդավարության անկյունաքարն է, և այն մեծ դեր ունի հասարակությունների և պետությունների ամրապնդման, մարդկանց կենսապայմանների բարելավման և աշխարհի երկրների կայուն զարգացման ապահովման գործում:

Կրթության բարեփոխումները ժամանակատար գործընթաց են, որին հասնելու համար ուսումնական հաստատության մանկավարժական հանրույթից պահանջվում է լուրջ և նպատակառուղղված աշխատանք և ժամանակ: Ուստի անհրաժեշտություն է առաջանում պլանավորել դպրոցի զարգացման ծրագիրը առաջիկա հինգ տարիների կտրվածքով, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ միջնակարգ դպրոցի հիմնական առաքելությունը շրջանավարտներին որակյալ կրթություն և մասնագիտական կողմնորոշում ապահովելն է:

ՀՀ Կոտայքի մարզի Աղավնաձորի Զ. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի առաջիկա հինգ տարիների զարգացման ծրագիրը կազմվել է հանրակրթության ոլորտը կանոնակարգող հետևյալ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

- ✓ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն
- ✓ ՀՀ օրենքը «Կրթության մասին»
- ✓ ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին»
- ✓ ՀՀ օրենքը «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին»
- ✓ ՀՀ օրենքը «Երեխայի իրավունքների մասին»
- ✓ ՀՀ օրենքը «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» այլ օրենքներով և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերով
- ✓ ՀՀ Կառավարության սահմանած «Հանրակրթության պետական չափորոշչի» դրույթներով
- ✓ ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրիկատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները» N 35-Ն հրամանի հիման վրա

- ✓ ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 18.04.2023թ. N 399-Ա հրամանի պահանջների համաձայն «Հայաստանի Հանրապետության կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագիծը
- ✓ ՀՀ Կոտայքի մարզի «Աղավնաձորի Զ. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ: Հաստատության աշակերտների համար ստեղծվելու են բոլոր հնարավորությունները՝ իրականացնելու ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով երաշխավորված կրթության իրենց իրավունքը:

ՀՀ Կոտայքի մարզի «Աղավնաձորի Զ. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոցի» զարգացման 2023-2028թթ. ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել նաև դպրոցի տնօրենի, տնօրենի տեղակալի և մանկավարժների նախորդ ուսումնական տարիների հաշվետվությունները, հաստատության ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները:

ՀՀ Կոտայքի մարզի «Աղավնաձորի Զ. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրի մշակման համար կատարվել են հետևյալ քայլերը՝

- ✓ Սահմանվել է դպրոցի առաքելությունը
- ✓ Վերլուծվել է առկա իրավիճակը՝ շենքային, ուսումնադաստիարակչական, համագործակցության և այլն, բացահայտվել են ուժեղ և թույլ կողմերը
- ✓ Սահմանվել են հիմնական նպատակները և դրանցից բխող խնդիրները
- ✓ Մշակվել է կատարման համար անհրաժեշտ գործողությունները, ժամկետները, պատասխանատունները
- ✓ Սահմանվել են հիմնական ռազմավարությունները, գնահատվել եղած և անհրաժեշտ մարդկային, նյութատեխնիկական և ֆինանսական միջոցները
- ✓ Կատարվել է ռիսկերի գնահատում և դրանց ազդեցությունը մեղմացնողկամ չեզոքացնող գործողությունները
- ✓ Ապահովել է համապատասխանությունը պետության կրթականքարականության միտումներին
- ✓ Ներկայացվել է վերահսկողության մեխանիզմները և համապատասխանվերահսկող անձիք
- ✓ Վերլուծվել է անհրաժեշտ ռեսուրսները՝ մարդկային, նյութատեխնիկական, S2S

- ✓ Ներկայացվել է գործողությունների գնահատման չափանիշները
- ✓ Ներկայացվել է ակնկալվող վերջնարդյունքները

**Ծրագրի նպատակը-** Կրթական այնպիսի միջավայրի ստեղծում, որը կնպաստի սովորողի կայացմանը որպես կոմպետենտ, կարողունակ և ինքնուրույն անհատ, ով կճանաչի, կհարգի իր ազգային, համամարդկային արժեքները և հարփոփոխ իրավիճակի պայմաններում պատրաստ կլինի ինքնափացման, ինքնաճանաչության, ազգային արժեքների արժեքուման ու դրանց պահպանման պատասխանատվության, կունենա իր ներուժին և նախասիրություններին համապատասխան մասնագիտական կողմնորոշում:

### **Ծրագրի հիմնական խնդիրները.**

- ✓ Բարձրացնել մանկավարժական աշխատողների մոտիվացիան և մասնագիտական հմտությունների մակարդակը
- ✓ Մանկավարժների և սովորողների գործունեության մեջ ներդնել հետազոտական, ստեղծագործական և նախագծային աշխատանք կատարելու
- ✓ Բարձրացնել դպրոցի մրցունակությունը

### **Սպասվող վերջնարդյունքները՝**

- ✓ Ուսումնադաստիարակչական գործընթացի արդիականացում՝ պետական կրթական չափորոշին և կրթակարգին համապատասխան
- ✓ Մանկավարժների մասնագիտական հմտությունների զարգացում
- ✓ Սովորողների առողջության պահպանում և ամրապնդում
- ✓ Նյութատեխնիկական բազայի հարստացում
- ✓ Ուսումնական հաստատության ներքին կազմակերպչական մշակույթի ձևավորում
- ✓ Կրթության կազմակերպման մասնակիցների ինֆորմացիոն մշակույթի ձևավորում

## **1. ՈՒՍՈՒՍԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է՝ հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով:

Դպրոցի գործունեության նպատակը .

1. Յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքների ապահովումն է:
2. Մանկավարժական համակազմի մասնագիտական գիտելիքների և հմտությունների, մանկավարժության տեսության և պրակտիկայի արդի զարգացումների, այդ թվում՝ մանկավարժության մեջ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման, ներառականության, հանրակրթության ոլորտը կարգավորող իրավական դաշտի իմացության, ուսումնական, բովանդակային և մեթոդիկայի հիմնախնդիրների լուծման կարողությունների ապահովում:
3. Դպրոցի ուսումնական միջավայրի բարելավում, տեղեկատվական-հաղորդակցման տեխնոլոգիաների, ուսումնական և նյութատեխնիկական բազայի շարունակական նորարացում:
4. Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի առաջանցիկ և կայուն բարձրացման ապահովում:
5. Արտադասարանական և արտադպրոցական համագործակցության խթանում, ընդլայնում:
6. Դպրոցի գործընթացի կառավարման, վարչարարության, գործավարական գործիքների ապահովում:

**Նպատակներից բխող խնդիրները**

1. Սովորողների անհատական կրթական կարիքների բավարարմանն ուղղված աշխատանքների իրականացում
2. Ուսումնառության ընթացքում յուրաքանչյուր սովորողի ակտիվ մասնակցություն, ուսումնական ծրագրերի

բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացման ապահովում, ըստ չափորոշչի՝ ութ կարողունակությունների, հիմնական ծրագրերի բովանդակության չորս բաղադրիչների ձեռք բերում և ձևավորում, ինչպես նաև նախասիրությունների և կրթական պահանջների բավարարում

3. Մանկավարժական համակազմի հետ տարվող աշխատանքների ընդլայնում բոլոր ուղղություններով՝ ատեսավորում, դասընթացներ, գործնական աշխատանքներ

4. Նորարարությունների, տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների, նյութատեխնիկական, ուսումնամեթոդական, ենթակառուցվածքների ստեղծում, համալրում

5. Դպրոցում յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքների, արտակարգ ընդունակություններ կամ ցածր առաջադիմություն ունեցողների, ինչպես նաև հանրակրթությունից դուրս մնացած երեխաների համար կազմակերպել, իրականացնել լրացուցիչ հանրակրթական ծրագրեր, անհատական պարապմունքներ և ըստ նախասիրությունների՝ արտադասարանական խմբակներ, որոնք կնպաստեն ուսման որակի բարձրացմանը

6. Աշակերտական, մանկավարժական համակազմի, կառավարման և խորհրդակցական խորհուրդների, համայնքի, կրթության կառավարման լիազորված և շահառու մարմինների, բարեգործների հետ համագործակցության խթանում, ընդլայնում

7. Օրենքով սահմանված նորմատիվ, ներքին իրավական ակտերի վարման, կիրառման թափանցիկության ու հաշվետվողականության ապահովում:

## **1.1 Կրթական կարիքների նկարագրությունը**

Համաձայն ՀՀ Հանրակրթության մասին օրենքի 4-րդ հոդվածի՝

1. Հայաստանի Հանրապետությունը հոչակում և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն:
2. Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:
3. Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակառությունը է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Հիմք ընդունելով օրենքի պահանջը՝ կարող ենք սահմանել հետևյալ կրթական կարիքները՝

- Ապահովել յուրաքանչյուր սովորողի համար բարենպաստ կրթական միջավայր
- Ներդնել կրթական նոր տեխնոլոգիաներ
- Պահպանել սովորողների ու աշխատակազմի համար ուսումնադաստիարակչական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անվտանգության ու սանիտարահիգիենիկ նորմերը, կազմակերպելով առողջության պահպանման և ամրապնդման համար միջոցառումներ(այդ թվում՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները)
- Ապահովել սովորողների առաջիսադումը և բարձր առաջադիմությունը, նրանց մասնակցությունը մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներին, մարզական և մշակութային մրցույթներին
- Սոցիալապես անապահով ընտանիքների, ինչպես նաև Արցախից տեղահանված սովորողների համար սոցիալական աջակցության թափանցիկ ծրագրերի իրականացում

- Սովորողների ֆիզիկական ,հոգևոր առողջությանը միտված ուսումնադաստիարակչան ծրագրերի և միջոցառումների անցկացում
- Արտադասարանական ու արտադպրոցական միջոցառումների ,ուսումնական նախագծերի իրականացում
- Երեխայի խնամքի ու դաստիարակության,ընտանիքներում ծնողների պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման,հոգեբանական կամ ֆիզիկական ճնշման բացառման ,երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկման միջոցառումների իրականացում
- Ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան՝ աշակերտական խորհրդի գործունեություն,որի ներկայացրած առաջարկություններն արտացոլելու են սովորողների կարիքները՝ փոխադարձ հարգանքի,սովորողների,ծնողների և տնօրենության փոխադարձ վստահության ու աջակցության պայմաններում
- Նպատակային ուսուցողական ծրագրեր իրականացնելու միջոցով՝ սովորողների շրջանում ձևավորել անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողություններ ու հմտություններ(այդ թվում՝ արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին տիրապետում,ուսումնական վարժանքների իրականացում
- Մանկավարժական կազմի մասնագիտական չափանիշների կատարելագործման միջոցառումներ (վերապատրաստումներ,առեստավորումներ)
- Դպրոցի ու համայնքի համագործակցություն (համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ սովորողների տեղեկացվածություն և նրանց մասնակցությունը համայնքային աշխատանքներին,համայնքի բնակիչների համար միջոցառումների կազմակերպում,շաբաթօրյակների կազմակերպում,ծառատունկ և այլն)
- Դպրոցի կառավարման, ֆինանսատնտեսական գործունեության,գնումների գործընթացների թափանցիկություն

## **1.2 Դպրոցի գործունեության համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության**

### **միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին.**

Հայաստանի Հանրապետությունում վերջին ժամանակաշրջանում իրակացվում են կրթության ոլորտի լայնածավալ բարեփոխումներ, որոնք հնարավորություն կտան լուծելու համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնելու իրավիճակը և նախադրյալներ ստեղծելու զարգացման համար:

Կրթության բարեփոխումները ժամանակատար գործընթաց է, որին հասնելու համար կրթության ոլորտի պատասխանատուններից, ինչպես նաև յուրաքանչյուր ուսումնական հաստատության մանկավարժական կազմից պահանջվում է լուրջ և նպատակառուղղված աշխատանք ու ժամանակ: Ուստի անհրաժեշտություն է առաջանում դպրոցի զարգացման ծրագիրը պլանավորելուց հաշվի առնել այն հանգամանքը, որ միջնակարգ դպրոցի հիմնական առաքելությունը շրջանավարտներին որակյալ կրթություն և մասնագիտական կողմնորոշում ապահովելն է:

Կրթությունը ժողովրդավարության անկյունաքարն է, այն մեծ դեր ունի հասարակությունների և պետությունների ամրապնդման, մարդկանց կենսապայմանների բարելավման և աշխարհի երկրների կայուն զարգացման ապահովման գործում: Կրթությունը մարդու հիմնարար իրավունքն է: Պետությունը պետք է ապահովի համընդիանուր, հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն:

Կրթությունը հանրային արժեք է: Այն պետք է նպատակառուղղված լինի տվյալ քաղաքակրթական տեսակի լինելիության ապահովմանը, ձևավորի ազատ և պատասխանատու քաղաքացի: Կրթության միջոցով տեղի է ունենում մարդու անձնային և մասնագիտական լիարժեք զարգացումը, ազգային և համամարդկային արժեքների վրա խարսխված աշխարհընկալման ձևավորումը: Հայաստանի Հանրապետությունը ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը, ինչպես նաև համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխան՝ պարտադիր միջնակարգ անվճար կրթություն:

ՀՀ Հանրակրթության մասին օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է Հանրակրթության նպատակները և պետական

1. Հանրակրթությունը նպատակառությամբ է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:
2. Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը.
  - 1) հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.
  - 2) հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին.
  - 3) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.
  - 4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը.
  - 5) հանրակրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային չափանիշներին համապատասխանությունը, ինչպես նաև միջազգային կրթական համակարգին ինտեգրումը.
  - 6) ուսումնական հաստատությունների ինքնավարության և պետական վերահսկողության հավասարակշռությունը.
  - 7) անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ ուսումնական հաստատությունների և դրանցում սովորողների ու աշխատողների իրավահավասարությունը.
  - 8) հանրակրթական և այլ կրթական ծրագրերի փոխհամաձայնեցվածությունը:

Կրթական ծրագրերը իրականացվում են նաև համայնքի կարիքներին համապատասխան: Ծնողական համայնքը, սովորողները գնահատում են կրթօջախի իրականացրած կրթական ծրագրերի որակը, նախաձեռնությունները և հանդես են գալիս իրենց առաջարկություններով, մասնակցում են տարբեր նախագծերի քննարկումներին և իրենց հնարավորությունների սահմանում աջակցում են դրանց իրականացմանը:

ՈՒսումնական գործընթացը արդյունավետ իրականացնելու համար դպրոցը առաջարկությունների կատարի կրթական կարիքների գնահատում յուրաքանչյուր սովորողի համար, վեր հանի նրանց կարիքները, անհրաժեշտության դեպքում համագործակցի ՏՄԱԿ-ի հետ:

Ուսումնասիրելով դպրոցի կողմից տրված փաստաթղթերի և այլ ռեսուրսների բովանդակությունը, ինչպես նաև հաշվի առնելով դպրոցի մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ հանդիպման արդյունքում կատարված առաջարկները՝ կարելի է արձանագրել, որ վերջին հինգ տարիների ընթացքում դպրոցում հանրակրթական պետական ծրագրերի իրականացումը կազմակերպվել է համընդհանուր մոտեցումներով՝ առանց գնահատելու համայնքի ու շահառու խմբերի կարիքները, հնարավորությունները, արձանագրված չեն նաև համագործակցություններ:

Ուստի՝ հանրակրթությունը պետք է նպատակառուղղված լինի յուրաքանչյուր սովորողի՝

- մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը
- մարդկային արժանապատվության պահպանմանը
- իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը
- ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը.
- մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական, աշխատանքային գործունեության նախապատրաստմանը.
- ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը.
- որպես ապագա քաղաքացու ձևավորմանը.

## **1.3 Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին**

### **ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Աղավնաձորի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1976թ.՝ ենթարկվելով Հրազդանի շրջգործկոմի ժողկրթբաժնին:

2003թ.-ի հունվարի 17-ին անվանակոչվել է Արցախյան ազատամարտի հերոս Զարզանդ Դանիելյանի անվամբ և գրացվել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Հրազդանի տարածքային բաժնում՝ անվանվելով ՀՀ Կոտայքի մարզի «Աղավնաձորի Զ.Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ (Վկայական 03Ա 057205 17.01.2003թ.):

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ Կոտայքի մարզպետի կողմից՝ 02.12.2010թ, N 408 որոշում: Վերջին անգամ փոփոխության է ենթարկվել 26.04.2023 թ-ին:

Դպրոցն օգտվում է իրավաբանական անձի իրավունքից, ունի զինանշանով կլոր կնիք և հաշվարկային հաշիվ բանկում:

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010թ հուլիսի 30-ի լիցենզիայի՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու տարրական ընդհանուր՝ առաջին աստիճանի կրթական ծրագիր՝ 100 սահմանային տեղով, հիմնական ընդհանուր՝ երկրորդ աստիճանի կրթական ծրագիր՝ 100 սահմանային տեղով և միջնակարգ ընդհանուր՝ երրորդ աստիճանի կրթական ծրագիր՝ 100 սահմանային տեղով:



2023-2024 ուս. տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ աշակերտների ընդհանուր թիվը կազմում էր 144 աշակերտ, որոնցից 49 աշակերտ I-IV դասարան, 64 աշակերտ՝ V-IX դասարան, 31 աշակերտ՝ X-XII դասարան:

2023թ.-ի հոկտեմբերի 15-ի դրությամբ աշակերտների թիվը 193 էր, որոնցից՝ 70 աշակերտ I -IV դասարան, 88 աշակերտ՝ V-IX դասարան, 35 աշակերտ՝ X-XII դասարան:

2023թ.-ի նոյեմբերի 20-ի դրությամբ աշակերտների թիվը 165 է, որոնցից՝ 60 աշակերտ I-IV դասարան, 72 աշակերտ՝ V-IX դասարան, 33 աշակերտ՝ X-XII դասարան:

Աշակերտների թվաքանակի փոփոխությունը պայմանավորված է Արցախից տեղահանված աշակերտների ընդունելության և ազատման հետ:

ՀՊԾ-ի և ՄԱԿ-ի հայկական հիմնադրամի աջակցությամբ տարրական դասարանների աշակերտները օգտվում են «Դպրոցական սնունդ» ծրագրից:

Դպրոցի շենքը տիպային է, կազմված երեք երկհարկանի մասնաշենքերից:

Դպրոցը որպես մեկ ամբողջություն ներկայանում է իր ենթակառուցվածքներով, նյութատեխնիկական, մարդկային ռեսուրսներով, ֆինանսական միջոցներով և կրթական ծրագրերով:

ՈՒստի սովորողների կրթական կարիքների ապահովման, ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսման որակի բարձրացման, ինչպես նաև մանկավարժների և, ընդհանրապես, դպրոցի ընդհանուր գործունեության արդյունավետության կարևոր պայմաններից է ենթակառուցվածքները, որոնք նպաստում են՝ սովորողների՝ ուսման նկատմամբ մոտիվացիային:

## Ընդհանուր տեղեկություններ

|  |   |
|--|---|
| Հաստատության անվանումը                   | «Աղավնաձորի Զ.Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ                |
| Հաստատության հասցեն                      | Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, գ. Աղավնաձոր, 2-րդ փողոց, 2-րդ շենք |
| Էլեկտրոնային հասցե                       | aghavnadzor-kotayk@schools.am                                       |
| Հաստատության ինտերնետային վեբկայքի հասցե | aghavnadzor-kotayq.schoolsite.am                                    |
| Դպրոցի հիմնադրումը                       | 1976 թ.   |
| Անվանակոչվել է                           | 17.01.2003թ Արցախյան ազատամարտի հերոս Զարզանդ Դանիելյանի անունով    |
| Դպրոցի կանոնադրությունը                  | Վերջին հաստատում՝ 26.04.2023թ                                       |

|  |                         |
|--|-------------------------|
| Պետական ռեգիստրում գրանցման համարը                       | N 85.210.01592          |
| Պետական ռեգիստրում գրանցման ամսաթիվը                     | 17.01.2003թ             |
| Դպրոցի շենքը   | տիպային                 |
| Մակերեսը   | 2055ք.մ                 |
| Դպրոցի տիպը ըստ իրականացվող հիմնական ծրագրերի            | ընդհանուր               |
| Դպրոցի տիպը ըստ իրականացվող կրթական ծրագրերի<br>աստիճանի | Միջնակարգ՝ 1-12 դասարան |
| Աշխատանքային շաբաթ                                       | Հնգօրյա                 |
| Աշխատանքային ռեժիմ                                       | Միահերթ                 |
| Հարկայնությունը  | Երկհարկ                 |
| Նախագծային հզորություն                                   | 360 աշակերտ             |
| Փաստացի հաճախող աշակերտների թիվը                         | 165                     |
| ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվը                                  | 1                       |
| Զրամատակարարումը   | շուրջօրյա               |
| Կոյուղացումը   | Կենտրոնացված            |
| Զեռուցումը   | Կենտրոնացված            |
| Հեռավորությունը Երևանից                                  | 68 կմ                   |

Հաստատության ենթակառուցվածքների (դահլիճներ, լաբորատորիաներ, արհեստանոց, ձաշարան, գրադարան, բուժկետ) մասին ավելի մանրամասն ներկայացված է «Ռւսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծություն» բաժնում:

Մանկավարժական խորհուրդ՝ 27 անդամ

Տնօրեն

Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ՝ 1

Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ՝ 1

Ուսուցիչներ՝ 19

Ուսուցչի օգնական՝ 1

Հոգեբան՝ 1

Գրադարանավար՝ 1

Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ՝ 1

Լաբորանտ՝ 1

Վարչատնտեսական և ուսումնաօժանդակ անձնակազմ

Վարչատնտեսական մասի համակարգող

Հաշվապահ՝ 1

Տնտեսվար՝ 1

Խոհարար՝ 1

Պահակ՝ 4

Հավաքարար՝ 3

Հնոցապան՝ 3 (սեղոնային)

Ընդհանուր աշխատողների թիվը՝ 41

Խորհրդակցական մարմիններ

Կառավարման խորհուրդ՝ 12 անդամ

Ծնողական խորհուրդ՝ 12 անդամ

Աշակերտական խորհուրդ՝ 28 անդամ

Առարկայական մասնախմբեր՝

Տարրական՝ 5 անդամ

Բնագիտամաթեմատիկական՝ 6 անդամ

Բանասիրական՝ 4 անդամ

Ուզումահայրենասիրական՝ 4 անդամ

## 1.4 Դպրոցի առաքելությունը

Դպրոցն այն վայրն է, որտեղ ձևավորվում են ժամանակակից պահանջներով զինված, ինքնուրույն մտածող, ժամանակին համընթաց քայլող, ստեղծագործող, մարդասեր, կրթված, հայրենասեր անհատներ, որոնք կերտում են ապագայի Հայաստանը՝ ուժեղ, անկախ, մրցունակ և ազգային արժեքների պահպանմամբ:

Յուրաքանչյուր դպրոցի առաքելությունը՝ ցանկալի ապագայի մտապատկերն է:

Դպրոցի հիմնական առաքելությունը եղել և մնում է ժամանակի պահանջներին համապատասխան սերունդ կրթելն ու դաստիարակելը:

- Պետության և ազգի անվտանգության ապահովման հզորացման գործում գերակա խնդիր է ապագայի մարտահրավերներին դիմակայելու և պայքարելու պատրաստ և ունակ մարդու ձևավորումը:
- Ուսումնական, սոցիալ-հոգեբանական, ստեղծագործական այնպիսի միջավայրի ձևավորումը, որը կապահովի յուրաքանչյուր սովորողի ստեղծագործական հմտությունների, քննադատական մտածողության, անհատական ունակությունների զարգացմանը:
- Ազգային գաղափարախոսության կրող և համաշխարհային մշակութային կյանքին ինտեգրված քաղաքացի դաստիարակելը, ով ունակ կլինի դիմագրավելու ժամանակակից մարտահրավերներին և իր ավանդը ներդնելու հայկական մշակույթի զարգացման և համաշխարհային հարթակներում այն ներկայացնելու գործին:
- Տեղեկատվական բարձր տեխնոլոգիաների կիրառումը դարձնել ամենօրյա կրթության մաս: Սովորողներին հնարավորություն տալ սեփական նախաձեռնություններն ու ծրագրերը իրականացնել արդի ժամանակներին համահունք:
- Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը աջակցող և նրանց անձի հնարավորությունների ամրողական բացահայտմանն ուղղված կրթական միջավայրի ապահովումը:
- Մերօրյա մարտահրավերների համատեքստում առանձնակի կարևորել լեզուների ուսուցումը, որոնց տիրապետումը 21-րդ դարի ստեղծագործող անհատի համար առաջին հերթին հաղորդակցման և մասնագիտական զարգացման

ապահովման երաշխիք է:

- Կրթական բոլոր աստիճաններում ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթություն ստանալու հավասար իրավունքը:
- Կարևորելով յուրաքանչյուր սովորողի անհատական կարողություններն ու ունակությունները՝ ստեղծել միջավայր, որը հաճելի և սիրելի է սովորողի համար:
- ԿԱՊԿՈՒ և ներառման կարիք ունեցող աշակերտների համար իրենց առանձնահատկություններին համարժեք կրթություն ապահովել, ձևավորել համապատասխան միջավայր:
- Զարգացնել սովորողների իրավագիտակցությունը՝ ապահովելով ինքնակառավարման մարմինների լիակատար և ակտիվ գործունեությունը:
- Սովորողների համար ստեղծագործական կարողությունների զարգացման տարբեր հարթակների ապահովումը դարձնել առաջնահերթություն:
- Կրթության մեջ կարևորել ոչ միայն գիտելիքը, այլ նաև կարողունակությունները, որը այսուհետ պարտադիր է Հանրակրթության պետական չափորոշչով:
- Ժողովրդավարական արժեքների խթանումն ու դաստիարակումը համարել առաջնահերթություն:
- Ազգային հենքի վրա տրվող կրթությունն ու դաստիարակությունը դնել հայրենասիրական դաստիարակության հիմքում:
- Դպրոցը պետք է լինի ջերմ, սիրելի միջավայր, որտեղ սովորողը իրեն զգա ազատ, անկաշկանդ և ապահով:

- Ուսուցիչը պետք է լինի նվիրված, հոգատար, սրտացավ, սիրառատ, հանդուրժողականությամբ և անսպառ գիտելիքներով օժտված:
- Սովորողները պետք է գիտակցեն, կրեն և գիտակցելով պահպանեն դարերի խորքից եկած հայի տեսակը և գիտելիքի լույսը կրելով իրենց մեջ, դառնան հուսալի հենարան հայրենիքի համար, ինչն էլ կլինի դպրոցի ներդրումը հայրենիքի հզորացման գործում:

## **2. Իրավիճակի վերլուծությունը. Ուժեղ և քույլ կողմերը**

Ներքին և արտաքին միջավայրը ուսումնական հաստատության նպատակների իրականացմանն ուղղված գործունեության, կրթական գործնթացի մասնակիցների և առկա ռեսուրսների փոխկապակցված ամբողջությունն է: Դպրոցի ներքին և արտաքին միջավայրի վերլուծության համար բաղադրիչներն են՝ ուժեղ կողմեր, քույլ կողմեր, հնարավորություններ և վտանգներ: Վերլուծությունն իրականացվել է ըստ պայմանական առանձնացված ոլորտների: Վերլուծությունը կատարվել է ներքին գնահատման հաշվետվության, հարցումների, շենքային և ռեսուրսային պայմանների դիտարկման, համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրության, դպրոցի ինտերնետային կայքի ուսումնասիրության հիման վրա:

### **2.1 Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծությունը**

## Շենքային պայմանների բոլոր պարամետրերը

| Դպրոցի շենքը և հարմարությունները         |  |
|--|--|
| Հարկայնությունները                       | 2  |
| Նախատեսված աշակերտական տեղերի քանակը     | 360  |
| Տվյալ շենքում դպրոցի տեղակայման տարեթիվը | 1976թ  |
| Փաստացի հաճախող սովորողների թիվը         | 193  |
| Շենքի ընդհանուր մակերեսը                 | 2055 ք.մ   |
| Դպրոցին կից տարածների մակերեսը           | Կաթսայատուն՝ 61,1 ք.մ,<br>ջերմոց՝ 90 խ.մ,<br>խաղաղաշտ՝ 300 ք.մ,<br>ենթակայան՝ 9,2 ք.մ<br>մշակող տարածք( այգի)՝ 8000ք.մ |

## Տարածքների անվանումները

| Անվանումը                   | Քանակ | Ընդհանուր մակերեսը ք.մ | Փաստացի գործողների քանակը | Դրանց ընդհանուր մակերեսը ք.մ |
|-----------------------------|-------|------------------------|---------------------------|------------------------------|
| Առանձնասենյակ / ուսուցչանոց | 3     | 155,2                  | 3                         | 155,2                        |
| Դասասենյակ                  | 12    | 610,65                 | 12                        | 610,65                       |
| Լաբորատորիա                 | 2     | 30,38                  | 2                         | 30,38                        |
| Մարզադաշտիած                | 1     | 174,25                 | 1                         | 174,25                       |
| Միջոցառումների դահլիճ       | 1     | 92,1                   | 1                         | 92,1                         |
| Արհեստանոց                  | 1     | 119,96                 | 1                         | 119,96                       |
| Ուսումնագիտության կարինետ   | 1     | 61,07                  | 1                         | 61,07                        |
| Ճաշարան                     | 1     | 83,91                  | 1                         | 83,91                        |
| Բուժկետ                     | 1     | 7,7                    | 1                         | 7,7                          |
| Բացօթյա                     | 1     | 300                    | 1                         | 300                          |

|                                   |   |       |   |       |
|-----------------------------------|---|-------|---|-------|
| սպորտիրապարակ                     |   |       |   |       |
| Զուգարան                          | 7 | 49,48 | 7 | 49,48 |
| Գրադարան                          | 1 | 15,93 | 1 | 15,93 |
| Արմաթ ինժեներական<br>լաբորատորիա  | 1 | 51,6  | 1 | 51,6  |
| Զենքի պահեստ                      | 1 | 7,56  | 1 | 7,56  |
| Տեխնիկական<br>նշանակության սենյակ | 4 | 66    | 4 | 66    |
| Լոգարան                           | 2 | 8     | 0 | 0     |
| Նկուղ                             | 0 | 0     | 0 | 0     |
| Ապաստարան                         | 0 | 0     | 0 | 0     |
| Հանդերձարան                       | 0 | 0     | 0 | 0     |

## Ենթակառուցվածքները

|  |                        |
|--|------------------------|
| Շենքի վիճակը                                 | Բավարար                |
| Զրամատակարարումը                             | Շուրջօրյա կենտրոնացված |
| Կոյուղացումը                                 | Կենտրոնացված           |
| Էլեկտրամատակարարումը                         | Առկա է                 |
| Գազամատակարարումը                            | Առկա է                 |
| Տաք ջրամատակարարումը                         | Բացակայում է           |
| Զեռուցումը                                   | Կենտրոնացված           |
| Կենտրոնացված ջեռուցման տեսակը                | Կաթսայատուն            |
| Ինսերնետային կապը                            | Առկա է                 |
| Հեռախոսային կապ                              | Բացակայում է           |
| Հայաստանի կրթական ցանց                       | Առկա է                 |
| Վերելակ                                      | Բացակայում է           |
| Լվացքատուն                                   | Բացակայում է           |
| Վերջին անգամ ընթացիկ նորոգումը իրականացվել է | 2021թ                  |
| Ընթացիկ նորոգումը ընթացքի մեջ է              | ՈΣ                     |

|   |       |
|---|-------|
| Վերջին անգամ հիմնանորոգումը իրականացվել է | 2005թ |
| Հիմնանորոգումը ընթացքի մեջ է              | ՈΣ    |
| Տրանսպորտային միջոցներ                    | -     |

Դպրոցն ունի կենտրոնացված ջեռուցում, ջրամատակարարում, ինտերնետ կապ:

2005թ իրականացվել է վերանորոգում, որի արդյունքում փոխվել են պատուհանները, կատարվել է ընդհանուր կոսմետիկ վերանորոգում: Դպրոցի երկու հարկերում առկա է տղաների և աղջիկների համար առանձնացված սանհանգույցներ:

Ուսումնական հաստատությունը պահպանում է շենքի և տարածքի անվտանգ շահագործումը

Ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար:

Ուսումնական հաստատությունն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից, արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին:

ՈՒսումնական հաստատությունում պահպանված են սովորողների և աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերը, կազմակերպված են առողջության պահպանման համապատասխան ծառայություններ:

Շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմատիվներին, շենքում առկա են դեպի դուրս բացվող 5 պահուստային ելքեր:

Ուսումնական հաստատությունն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով, ապահովված է սարքին վիճակում գտնվող հակարդեհային, անվտանգության լրակազմով, տանիքը պատված է հրակայուն նյութերով:

Մշակված և առկա է սովորողների ու անձնակազմի տարիանման պլան, որում հաշվի են առնված նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները: Նախարարական, բոլոր հարկերում, փակցված են տարիանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցալարներով, տարիանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով:

Հաստատությունը պահպանում է իր նախագծային հղորությունը:

Ուսումնական հաստատությունում սովորողների թիվը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվներին և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին:

Ուսումնական հաստատության դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում են առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին:

Ուսումնական հաստատության սովորողները «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնական դասընթացները անցկացնում են մարզադահլիճում:

| Ուժեղ կողմեր  | Թույլ կողմեր   |
|---|--|
| <ul style="list-style-type: none"><li>➤ Տանիքն ամբողջությամբ վերանորոգված է</li><li>➤ Կախայատան առկայություն</li><li>➤ Դպրոցի ճաշարանը լավ վիճակում է, առկա է տաք և սառը ջուր, կոյուղի</li><li>➤ «Արմաթ» ինժեներական լաբորատորիա</li><li>➤ Բուժկետ</li><li>➤ Պահուստային և հիմնական ելքեր</li><li>➤ Արհեստանոցի առկայություն</li><li>➤ Ընդարձակ բացօթյա սպորտիրապարակ</li><li>➤ Ցանկապատ տարածք</li><li>➤ Այգի՝ որոշակի քանակով մրգատու ծառերով</li><li>➤ Կոյուղագծերը հոկտեմբեր ամսվա ընթացքում հիմնանորոգվել են</li></ul> | <ul style="list-style-type: none"><li>➤ Չկա հաշմանդամություն ունեցողների համար հարմարեցված հատուկ սանհանգույց, չկան թերահարթակներ:</li><li>➤ ԿԱՊԿՈՒ սովորողների համար չկա նախատեսված սենսորային սենյակներ և մանկավարժական աջակցության կաբինետներ:</li><li>➤ Գրադարանը չունի ընթերցասրահ:</li><li>➤ Դպրոցում չկա համակարգչային դասարան, ինչպես նաև համակարգիչներ՝ սովորողների համար:</li><li>➤ Լաբորատորիաները գտնվում են ոչ բարվոք վիճակում, չկան համապատասխան սարքավորումներ և նյութեր</li><li>➤ Բակում առկա է ջերմոց, որը սակայն չի գործում:</li><li>➤ Դպրոցը չունի նկուղ, հետևաբար բացակայում է նաև ապաստարանը</li><li>➤ Բացօթյա սպորտիրապարակում չկա համապատասխան մարզագույց</li></ul> |

## **2.2 Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծություն**

Դպրոցի նյութատեխնիկական բազան անհրաժեշտ է կրթական, հետազոտական, ստեղծագործական գործունեության և կրթության բնագավառի այլ խնդիրների լուծման համար: Ուսումնական հաստատության ուսումնանյութական բազան նյութական և տեխնիկական միջոցների համալիրն է, որը նախատեսված է պետական կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի և պլանավորումների համապատասխան սովորողների պատրաստման ապահովմանը:

Ուսումնանյութական բազայի հիմնական տարրերն են.

- ուսումնալաբորատոր բազան՝ դասարաններով, կաբինետներով, լաբորատորիաներով, ուսումնաարտադրական արհեստանոցով, ուսումնական գրադարանով, ինչպես նաև տեղեկատվական և տեխնոլոգիաների միջոցներով, լաբորատոր սարքերով, ուսուցման և վերահսկողության միջոցներով
- մարզական բազան դպրոցամերձ մարզական տարածքն է, ինչպես նաև մարզադահլիճը և սարքավորումները,
- տեղեկատվության ապահովման միջոցներ՝ դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ուսումնամեթոդական, գիտական և տեղեկատվական գրականություն, դպրոցի կանոնադրությունը, դեկավարության իրամանները, մանկվարիի և աշխատակազմի խորհրդակցությունների որոշումները, այլ նորմատիվ փաստաթղթեր, համակարգչային ծրագրեր, համացանց, էլեկտրոնային փոստ, ուսուցողական և այլ տեսանյութերի ցուցադրություն, դիդակտիկ նյութեր և այլն:

### **Շահագործվող ՀՄ-ներ**

|                   |     |
|-------------------|-----|
| Պահարան           | 15  |
| Աշակերտական սեղան | 100 |
| Աշակերտական աթոռ  | 200 |
| Ուսուցչական սեղան | 17  |
| Ուսուցչական աթոռ  | 50  |

|                   |    |
|-------------------|----|
| Գրատախտակ         | 23 |
| Դաշնամուր         | 1  |
| Կախիչ             | 15 |
| Բազմոց            | 1  |
| Մետաղական պահարան | 2  |
| Շախմատի սեղան     | 12 |
| Շախմատի աթոռ      | 12 |

## SZS սարքավորումներ

| Սարքավորում                    | Առկա քանակ | Պահանջարկ |
|--------------------------------|------------|-----------|
| Համակարգիչ և նոութբուք         | 3          | 10        |
| Բազմաֆունկցիոնալ սարք          | 0          | 2         |
| Մուտքագրիչ/սկաներ              | 1          | 1         |
| Պրոյեկտոր                      | 1          | 0         |
| Տպիչ                           | 1          | 1         |
| Էլեկտրոնային գրատախտակ         | 0          | 1         |
| Անխափան սնուցման սարք<br>(UPS) | 0          | 12        |
| Արտատպիչ                       | 1          | 2         |

*Տվյալներ դպրոցի գրադարանի և դրա գործունեության վերաբերյալ*

|          |          |
|----------|----------|
| Ցուցանիշ | Տվյալներ |
|----------|----------|

|   |         |
|---|---------|
| Գրադարանի տարածքը քմ-ով   | 15.93   |
| Գրադարանում համակարգիչների թիվը                                       | 0       |
| Գրադարանում ինտերնետին միացված համակարգիչների թիվը                    | 0       |
| Գրադարանում կամ ընթերցարահում նստատեղերի թիվը                         | 0       |
| Գրադարանային ֆոնդում առկա գրքերի թիվը՝ այդ թվում                      |         |
| գեղարվեստական գրքեր   | 2586    |
| բառարաններ, հանրագիտարաններ, ատլասներ և այլն                          | 9       |
| ուսումնամեթոդական գրքերի թիվը   | 35      |
| ամսագրերի թիվը  | 0       |
| այլ   |         |
| Վերջին անգամ գրադարանային ֆոնդի նոր գրականությամբ համարվելու տարեթիվը | չի եղել |
| Գրադարանից միջինում ամսական օգտվողների թիվը                           | 112     |
| Պատասխաններ այն կամ ոչ  |         |
| Վերանորոգված է արդյոք գրադարանը                                       | այո     |
| Անցկացվում են գրադարանում դասեր և պարապմունքներ                       | ոչ      |
| Գրադարանավարն ունի համապատասխան բարձրագույն կոթություն                | ոչ      |

|  |     |
|--|-----|
| Վերջին երեք տարում գրադարանավարն անցել է վերապատրաստում  | այս |
| Գրադարանն ունի էլեկտրոնային ռեսուրսներ,<br>որքան   | ոչ  |
| Սովորողները կարող են ինքնուրույն ու ազատ<br>մոտենալ գրադարակներին և պահարաններին,<br>ընտրել իրենց անհրաժեշտ գրականությունը և<br>վերցնել այն ընթերցարահում աշխատելու<br>ժամանակ | ոչ  |
| Գրադարանն ունի գրադարանավարության<br>հատուկ համակարգչային ծրագիր   | ոչ  |
| Գրադարանավարը կարողանում է օգտվել<br>գրադարանավարության հատուկ<br>համակարգչային ծրագրից  | ոչ  |

## Վերլուծություն

| Ուժեղ կողմ  | Թույլ կողմ   | Գործողություն   |
|---|--|---|
| <ul style="list-style-type: none"> <li>❖ Գրադարանը վերանորոգված և<br/>մասամբ կահավորված է</li> <li>❖ Գրադարանավարը<br/>բարեխղճորեն կատարում է իր</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>❖ գրադարանը չունի ընթերցարան</li> <li>❖ համակարգիչներ</li> <li>❖ գրականությունը չի<br/>բավականացնում ուսումնական</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>❖ Անհրաժեշտ է համալրել<br/>գրադարանային ֆոնդը</li> <li>❖ ձեռք բերել<br/>համակարգիչներ</li> </ul> |

պարտականությունները

պրոցեսը լիարժեք կազմակերպելու  
համար( ընթերցողների  
սակավությունը պայմանավորված է  
դրանով)  
գրադարանավարը չունի  
բարձրագույն կրթություն, ունի  
միջին մասնագիտական կրթություն

- ✚ ստեղծել ընթերցարան
- ✚ նպաստել սովորողների  
շրջանում ընթերցանության  
ակտիվացմանը
- ✚ գրադարանավարին  
պարբերաբար ուղարկել  
վերապատրաստումների

### «Արմաթ» լաբորատորիայի ուսումնական գույքի ցուցակ

| Հ/Հ | Անվանումը  | Քանակը/հատ/ |
|-----|------------|-------------|
| 1   | Համակարգիչ | 8           |
| 2   | 3-D տպիչ   | 1           |
| 3   | Պրոյեկտոր  | 1           |

### Ուժեղ կողմ

### Թույլ կողմ

- ✚ լաբորատորիան հագեցած է անհրաժեշտ  
գույքով
- ✚ խմբակավարը նպատակասլաց,  
ստեղծագործ, նորարար, սովորողներին  
մոտիվացնող հատկություններ ունի
- ✚ «արմաթցիները» պարբերաբար հանդես են  
գալիս նորարարություններով՝ դպրոցի  
ինքնաշխատ զանգի ստեղծում, կաթիլային  
մինի-ռոռզման համակարգ՝ սենյակային  
բույսերը ջրելու համար
- ✚ Մասնակցում են բազմաբնույթ  
մրցանակաբաշխությունների և

- ✚ Հաճախողների սակավ քանակ

### Արհեստանոցի ուսումնական գույքի ցուցակ

| Հ/Հ | Անվանումը         | Քանակը /հատ/ |
|-----|-------------------|--------------|
| 1   | Հաստոց/խառատային/ | 1            |
| 2   | շաղափ             | 1            |
| 3   | Հաստոց ֆուզան     | 1            |
| 4   | տակդիրֆուզանով    | 1            |

| Ուժեղ կողմ        | Թույլ կողմ  | Գործողություն  |
|-------------------|---|--|
| ❖ Ընդարձակ տարածք | <ul style="list-style-type: none"> <li>❖ Հաստոցները հին են,<br/>օգտագործման<br/>ենթակա չեն</li> <li>❖ Չկան կարի<br/>մեքենաներ,<br/>խոհարարության<br/>համար<br/>հարմարություններ,<br/>գույք</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>❖ Հնարավորության դեպքում<br/>ձեռք բերել անհրաժեշտ<br/>գույք «Տեխնոլոգիա»<br/>առարկան չափորոշչային<br/>պահանջներով<br/>դասավանդելու համար</li> </ul> |

### Ճաշարան

| Հ/Հ | Անվանումը          | Քանակը /հատ |
|-----|--------------------|-------------|
| 1   | Սառնարան           | 1           |
| 2   | Զրատաքացուցիչ      | 1           |
| 3   | Էլեկտրական սալօջախ | 1           |
| 4   | Զեռոց              | 1           |
| 5   | Լվացարան           | 5           |

|          |                                   |    |
|----------|-----------------------------------|----|
| <b>6</b> | Ճաշասեղան/աշակերտական             | 8  |
| <b>7</b> | Չժանգույզող մետաղից<br>դարձակաշար | 2  |
| <b>8</b> | Սպասք                             | 70 |

| Ուժեղ կողմ                             | Թույլ կողմ   | Գործողություն  |
|--|--|--|
| Կահավորված է<br>Առկա է անհրաժեշտ գույք | Տարածքը ընդարձակ չէ<br>Գույքի քանակը սնվող սովորողների թվաքանակին չի համապատասխանում | Հնարավորության դեպքում քառակուսի սեղանները փոխարինել ուղղանկյունաձև սեղաններով |

## Բուժկետ

|   |   |   |                           |                       |  |
|---|---|---|---------------------------|-----------------------|--|
| Դպրոցում առկա է բուժկետ, թե՞նչ                                |   |   |                           |                       |  |
| <input checked="" type="checkbox"/> Այն                       |   | <input type="checkbox"/> $\Omega_{\Sigma}$            |                           |                       |  |
| Դպրոցն ունի բուժաշխատող և կարող է տրամադրել առաջին օգնություն |   |   |                           |                       |  |
| Այն   |   | <input checked="" type="checkbox"/> $\Omega_{\Sigma}$ |                           |                       |  |
| Բուժկետի<br>գունվելու<br>հարկը և<br>տարածքը/քմ/               | Բուժաշխատողների<br>թիվը և նրանց<br>պաշտոնները | Բուժկետում<br>առկա գույքը                             | Վերանորոգված<br>են, թե՞նչ | Սանիտարական<br>վիճակը | Առաջին<br>բուժօնության<br>միջոցների և<br>դեղերի<br>առկայությունը |

|                      |   |  |                            |        |                            |
|----------------------|---|--|----------------------------|--------|----------------------------|
| 1-ին հարկ,<br>7,7 քմ | 0 | մահճակալ,<br>անկողին,<br>սեղան,<br>աթոռ,պահպան | ✓ Ujn<br>$\Omega_{\Sigma}$ | Նորմալ | ✓ Ujn<br>$\Omega_{\Sigma}$ |
|----------------------|---|--|----------------------------|--------|----------------------------|

| Ուժեղ կողմ  | Թույլ կողմ  |
|---|---|
|  Կահավորված<br>կարինետ<br> Մշտապես<br>թարմացվող<br>դեղորայք |  Դպրոցը չունի<br>բուժքրոջ հաստիք |

## Մարզադաշտական առաջնորդություն

### ՄԱՐԶԱԳՈՒՅՔԻ ՑՈՒՑԱԿ

| Հ/Հ | Անվանումը              | Քանակը/հատ/ |
|-----|------------------------|-------------|
| 1   | Չուզափայտ              | 1           |
| 2   | Մարմնամարզական պատ     | 4           |
| 3   | Մարմնամարզական նստարան | 7           |
| 4   | Մարմնամարզական ներքնակ | 5           |
| 5   | Մարմնամարզական կամքակ  | 2           |
| 7   | Բասկետբոլի գամբյուլ    | 2           |
| 8   | Ֆուտբոլի դարպաս        | 2           |
| 9   | Ֆուտբոլի գնդակ         | 5           |
| 10  | Վոլեյբոլի ցանց         | 1           |
| 11  | Վոլեյբոլի գնդակ        | 4           |

|    |                         |    |
|----|-------------------------|----|
| 12 | Բասկետբոլի վահանակ      | 2  |
| 13 | Մազցման պարան           | 2  |
| 14 | Բարձրացատկի կանգնակ     | 4  |
| 15 | Բարձրացատկի ձող         | 2  |
| 17 | Կողմնացուց              | 1  |
| 18 | Վայրկյանաշափ            | 1  |
| 19 | Ուժաշափ                 | 1  |
| 20 | Թենիսի սեղան/մետաղյան/  | 2  |
| 21 | Գիր                     | 1  |
| 22 | Գանտել                  | 2  |
| 23 | Մանկական սպորտային ժիշտ | 10 |
| 24 | Մարմնամարզական օղ       | 10 |
| 25 | Մարմնամարզական կուն     | 1  |
| 26 | Կախովի սպորտային գործիք | 1  |
| 27 | Նվազարկիչ               | 1  |
| 28 | Բասկետբոլի գնդակ        | 6  |
| 29 | Մարմնամարզական այծիկ    | 2  |

| Ուժեղ կողմ                                     | Թույլ կողմ   | Գործողություն  |
|--|--|--|
